

ԾԱՂԻԿ

ԿՃՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԾԱՂՐՈՂՆԵՐՈՒ ՕՌԿԱՆ
ԵՒ

ԱԶԳ. ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՍԱՏԻՐԱԿԱՆ
Ծ Ա Ղ Ր Ա Թ Ե Ր Թ

Որ ամէն բան կը մեղացնէ, չլսածը կը պատժէ, չհղածը կը նկատագրէ,
միտք կ'ընկալայէ, կը ձողկէ եւ... շարունակելի:
Այս ամէնը կը հաւաքէ, կը դասաւորէ, կը խմբագրէ
ԳՐԻԳՈՐ ԹՈՌՈՍՅԱՆ (Բ. ԼՈՌԻՍԻՆԵԱՆ)

«ԿԱՎՈՐՇ» — «ԾԱՂԻԿ» ԵՂԲԱՅՐԱԿՈՒԹԻՒՆ

— ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ —

Ամէն մարդ դիտել կուտայ մեզ քէ՛ Կավո՛րշ եւ Ծաղիկ միասին շատ սուղի կը նստին:

— Մենք Կավո՛րշն ալ Ծաղիկն ալ չենք կրնար զատել, կ'ըսենք, բայց գիտեցնելիք է՛ք մը անձնացէ՛ք, որպէս զի երկուքն ալ մէկն են թափառող գրուիմք:

Մեր բարձրագոյն առեանք այս փափակ խնդիրը նկատողութեամբ առնելու համար բացառիկ ճիշտ մը գումարեց եւ որոշեց հետեւեալ վերջնական սակագիրը:

★ Կավո՛րշ եւ Ծաղիկ միասին, տարեկան, Պոլսոյ համար 80, վեցամսեայ՝ 45 դրոշ: Կավո՛րշ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 45 դրոշ:

Կավո՛րշ եւ Ծաղիկ միասին, տարեկան, Գաւառի համար 100, վեցամսեայ՝ 60 դրոշ: Կավո՛րշ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 60, վեցամսեայ՝ 35 դրոշ:

Կավո՛րշ եւ Ծաղիկ միասին, Ռեաւսահմանի համար տարեկան 25 ժր., վեցամսեայ՝ 13 ժր.: Կավո՛րշ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 15, վեցամսեայ՝ 8 ժրոշ:

★ Զրի քեր կուտանք կոր եւ զանեցաքեր մանաւանդ:
Բայց ամէն մարդ գիտէ արդէն քէ մենք փարայի համար չենք աշխատիր, — ո՛հ, քա՛ն լիցի, — այլ Հայ ազգին համար: ԿՆԻԿ

ԹԻԻ 42

10 ՓԱՐՍ

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրչունլու խան թիւ 7

31 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1908 ՈՒՐԲԱԹ

زغايك غزيمسى درعليه غلطه قورشونلى خاندە نومرو ۷

Հին օրերու մասին...

[ԻՆՏԵՐՎՅՈՒ ՆԵՐՎԱՅԻՆ ՀԱՅԵՐԸ]

Այս յօդուածը պարզապէս գրուեցաւ որպէս զի ապագայ մեր Ազգ. պատմութեանը կարենայ հասկնալ թէ ի՞նչ եղած է կեանքը մեր Ազգ. երեսփոխաններուն:

Երբ հին օրեր կ'ըսենք, բնականաբար չէ՛ք կարծեր որ կամ Աղամ Եւսայի ժամանակէն մնացած վրան բաց պատմութիւն մը պիտի պատմեմ եւ կամ շատ շատ 18րդ դարէն Տեւրդենց պատմելի կեանքէն զրուագդ մը:

Հին օրեր կ'ըսենք մենք այժմ այն օրերուն, երբ դեռ Յուլիոս 11-ի օրը չէինք ողջունած, երբ դեռ արեւդալը այնքան փայլուն եւ կինները այնքան համով չէին երեւար մեր աչքին, երբ դեռ Արքայադ Բաղդադէն վախ ունէր թէ՛ Երուսաղէմ կ'աքսորուի եւ Միջագետքի կ'ընկնէ Գասթափունի մէջ... կ'երազէր Վոսփորի ափունքները:

Հին օրեր էին բնականաբար այդ օրերը, հին օրեր այնքան որքան նոր օրերու մէջ ենք այժմ:

Մարդիկ այդ օրերուն կը վախնային ամէն բանէ. կը վախնային նոյն իսկ ու եւ չհորձիէ մը եւ պէ՛հձիէ մը եւ այս երկուքէն մէկուն հետ խօսելու համար կամ արգունալ եւ կամ քաղցիր մը մատուցանելու էր:

Ու մարդիկ, Թուրքիոյ մարդիկը, կ'ապրէին այնպէս ինչպէս կ'ապրէր ձուկը ծովուն խորը... համար ու միշտ մեծագոյն ձուկերէ կ'ըլլելու վախին ներքեւ:

Ամէն Հայ որ կը գտնուէր Թուրքիոյ երկինքին տակ, կամ յեղափոխական էր եւ կամ առնուազն... Ռազմիկ կարգացող եւ հետեւաբար արժանի 101 տարուան բերդարգելութեան եւ կամ կաղախանի, թէեւ այս օրերում, նուազ յանցաւորներ կը նկատուին քէօր Ալիները եւ վըճիւնին կը բեկանուի:

Այդ հին չարաբաստիկ օրերուն մէջ կ'ապրէր նաեւ Ազգային ազադեմիայի անդամներէն մին (Ուսումնական Խորհուրդը ըսել կ'ուզենք), որ այսօր Հայկական... բառումէն դին առաջին ատենադպիրն ալ է:

Դրսերեւոյթով հակայ, խաղիպ խը-

յաճեք իր սարօքը, զայն չճանչցող մը, այդ Ազգ. Ազադեմիոյ անդամը հակառակուսի սերունդի մը վերջին շառաւիղը ըլլալ պիտի կարծէր:

Հայկի դէմ պատերազմող Ռէյլը եւ Փղապարներու Գողթիթը, այնքան մեծ ու հակայ չէին երեւար մեր աչքին, որքան կ'երեւար այդ Ազադեմիոյ անդամը որ ամէն ժամանակի ու ամէն միջավայրի յարմարելու անհուն առաւելութիւնն ալ ունէր:

Այսօր կրնար քեզի այնքան բարեկամութիւն ցոյց տալ, որ կարծէիր թէ կրնայ քեզի համար իրիկունը անձնասպան ըլլալ եւ միւսերը այնքան թշուառ, եթէ դժբախտութիւնը ունենայիր իր եւ կամ կնոջը սանկ պզտիկ պոնդի հարուած մը տալու:

Վախկոտ ալ կայ վախկոտ ալ. բայց մեր այս հսկան, վախկոտ էր այնքան որքան գուցէ չէր... այն օրերուն մէջ Ընկեր թօկոն:

Ճամբան շուտ վազող կառք մը, քիչ մը բարձրաձայն խօսակցութիւն, երկու գինիներու գզուռուտք մը, կը բաւէին լեղապատառ փախցնելու այդ Ազադեմիոյ անդամը:

Օր մըն էր, որ յիշատակելի եւ մեր ապագայ երեսփոխաններու պատմութեան համար ամենակարեւոր: 1906 կամ 907 թուականին էր:

Ձոյգ մը գրավաճառներ, որոնք հին օրերուն մէջ ալ գլխարկ կը կրէին եւ անխառնական հովեր ունէին, գրքի մը տպագրութեանը եւ կամ փորձերու սրբաբարութեան համար Ազադեմիոյ անդամին տունը կ'երթային կուգային, գոնէ շաքարով մէկ քանի հեղ:

Բայց երբեք հաշիւի չէր առնուած մարդուկ մը, հէրիֆ մը, որուն առնուն էր խափիե եւ պաշտօն ունէր այդ կարգի անձերու քայլերը եւ տունները հետապնդել... հաց հանելու համար:

Եւ օր մը այդ խափիէն, Հայերուն այդ պիք նուազը, օր մը, դժբախտ օր, հարցուց Ազադեմիոյ այդ անդամին թէ՛ ո՞վ էին այդ շաքարալոյսները, որոնք ճիշդ յեղափոխականի կը նմանէին:

Խեղճ մարդը դողալ սկսաւ եւ հարկէ կըրցաւ քանի մը խօսք կակաղեւէ յետոյ տուն փախաւ, չմոռնալով

միւսնոյն ատեն խստիւ յանձնարարելու արարածին դռնապանին՝ որպէս զի երբ անգամ մըն ալ գտնայ այդ շաքարալոյսները, դուռը չբանայ:

Ու ճիշդ քառասուն օր այլ եւս տունէն դուրս չելաւ այդ յաղթանաւ դամ ու խաղիպ խըյաճեքը տեղը եւ զող անդամը, եւ նոյն իսկ, ահա՜ տեսներ կը պատմեն թէ՛ քառացան իսկ չելաւ, պատուհանին առջեւ չերեւաց:

★
Վախկոտ օր վերջն է:
Բաւական սիրտ առեր է Ազադեմիոյ այդ քաջարի անդամը:

Վախկոտը մէկերորդ օրը թաղեցի բանաստեղծ բարեկամներէն մէկը այցելութեան կ'երթայ իրեն:

— Ի՞նչպէս էք, կը հարցնէ բանաստեղծը, անցուցի՞ք ձեր վախի շրջանը:

— Ո՛չ բոլորովին, բայց գիտե՛ս սիրելի բարեկամ որ, թէեւ դեռ փոքր չեմ կրնար ելլել, բայց (օրհնանքի շարժումներով մը)... թառացան ելլալու կը համարձակիմ կոր...

★
... Այսօր այս քաջ հայորդին, որուն քով մեր փեսայիներէն՝ Անդրանիկը եւ Աղբիւր-Սերորը կուտ մը անգամ չեն ընէր, կոյուած է վարելու Հայ ազգին... գործերը:

ԸՆԿԵՐ ԿԻԿՈ

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԸ

Ձմեռացի:

Կարելի բան չէ՛:

Հայերէն զինուոր պիտի առնէ եւ զեր Թուրք կառավարութիւնը:

Ամբակում աղա, որուն ճակտէն վախկոտը չորս ձմեռներ անցած են, քանի մը օրէ ի վեր զինուորական վարժութիւններ ընելու կը պարապի ա՛յնպիսի փափաքով ու եւանդով, որ ո՛չ սենեակը մտնողները կը տեսնէ, ո՛չ ալ անոնց խօսքերուն կը պատասխանէ:

Կինը կարծելով թէ ամուսինը խելագարած է, բժիշկը կանչելու տայ անմիջապէս:

Երկու ժամ ետքը կուգայ բժիշկը, որ ըստ բժշկական սովորութեան, կը հարցնէ.

— Ո՞վ է հիւանդը:

Գիտե՛ք արդէն թէ Հիպոկրատի սաները ա՛յն ատեն կը ճանչնան հի-

ւանդները, երբ ասոնք մատով ցուցուին իրենց: Երկու քաջառողջ մարդոց քով հիւանդ մը դիւր եւ հարցողը բժշկին:

— Պարոն տղթոր, ո՞րն է հիւանդը:

Յայտնի է որ «Սա՛ է», պիտի պատասխանէ քեզի, ցոյց տալով այն մարդը որ երկաթի պէս քաջառողջ է:

Հիւանդութիւններն ալ ա՛յն ատեն կը ճանչնան, երբ հիւանդը կը մեռնի:

Չկայ մեռեալ մը, որուն ի՞նչ հիւանդութենէ մեռած ըլլալը չհասկըցուի:

Մեր խնդրէն քիչ մը հեռացանք. մօտենանք անոր:

Թիշկը կ'առաջնորդուի Ամբակում աղայի սենեակը:

— Բարե՛, Ամբակում աղա՛, կ'ըսէ բժիշկը:

— Մէկ, երկու, երեք, կը պատասխանէ Ամբակում աղա, որ աւելի կ'օթ մը բռնած՝ վարժութիւն կ'ընէ:

— Ի՞նչպէս էք, Ամբակում աղա՛:

— Մի՛ ձախ, մի՛ յաջ...

— Ձեզի խօսք մը ունէի ըս...

— Հապօ՛ն յառաջ, կը գոչէ Ամբակում աղա եւ անանկ արագութեամբ մը կ'անցնի բժշկին քովէն, որ Ասկղեպիոսին աշակերտը գետին կ'իյնայ:

Թիշկը վար կ'իջնայ եւ Ամբակում աղային տիկինին կ'ըսէ.

— Ձեր ամուսնոյն ուղեղը վնասուած է:

— Խելագարած է:

— Գրեթէ:

— Ի՞նչ կ'ըսէք, հիմա խելքս կը թռցնեմ... ասոր մէկ ճա՛րը:

— Ճա՛րը... կապելու եւ Փրկիչ տանելու է:

— Ըլլալու բան չէ... գոնէ Ազգային Երեսփոխանական Ժողովը տանինք:

— Երեսփոխանական Ժողովը յիմարանոց է:

— Ի՞նչ գիտնամ, երէկ քրոյս տղան կ'ըսէր որ ազգային երեսփոխանական Ժողովոյ մէջ խնդ ու խելառ խօսքեր կ'ընեն: Բայց, պարոն տղթոր, իմ ամուսինս խելագարելու պատճառ մը չունէր:

— Բանի մը վրայ շատ մտածեց:

— Բնաւ երբեք:

Եւ դուք ձեր բոլոր անուշ նայ-
ուածքները ի սպաս կը դնէք հայ
սովորոց:

Եթէ անոնք երախտապարտ չըլ-
լան ձեզի յաւիտեան, Աստուած
վկայ, շատ ապերախտ պէտք է ըլ-
լան:

Շատ ապրիք, հայ տիկիններ,
երկինք ձեր սրտին կօրէ տայ ձեզի:
ՄԵՏԱՊԱՏԻ ՄՈՒՐԱՅԳԱՆ

ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ԳԱԶԻՆ ՎՐԱՅ Ո՞Վ ՊԻՏԻ ՆՍՏԻ

ԱՒԵՏԻՍ... ԱՒԵՏԻՍ...

[Անձի հեռագրով բաշտած]

(Երբ մասնաւոր բարկացէն)

Էջմիւսի (29 Հոկտ.) — Ա՛խ,
վաղը, վաղը, վաղը...

ՆՈՅՆ (Կէս Գիշեր). — Ամ-
բող պատգամաւորութիւնը առաջին
խումբին պէս կը մտածէ. երկուն-
քի մէջ է... տեսնենք այսքան ծը-
նդակաւ ցաւերէ վերջ ի՞նչ դուրս
պիտի գայ պատգամաւորներու...
արգանդէն:

ՆՈՅՆ (Առտուան կողմ). — Պատ-
գամաւորները արթնցան... աչքեր-
նին չփեցին. քիթեւոյն վրան կը մէջ
են դեռ, անոր համար որ առտուան
սասե խանկերն չեն խմած:

Էջմիւսի՝ ՎԵՀԱՐԱՆ (Հոկտ.
30). — Այսօր, այսօր, այսօր...
պատգամաւորները ժողովեցան. զի-
րար բարեւեցին, իրարու խաթր հար-
ցուցին:

ՆՈՅՆ (Վեհարանի խոյն սենեա-
կէն). — Կէս օր է, քառանուն ցանկը
պատրաստեցաւ. դեռ չենք գիտեր
թէ՛ ատոնցմէ որոնք են երկու քան-
տիւանները:

ՆՈՅՆ (Կես գիշերը 1/2 ժամ ան-
ցած). Փառք քեզ Տէր, փառք քեզ,
յաղագսամենայնի Տէր փառք քեզ...

ՆՈՅՆ (Առտուան կողմ). — Խորին
լուծութիւն և...

Էջմիւսի (31 Հոկտ.) — Պա՛ւս,
պա՛ւս, պա՛ւս. թնդանթները գո-
ռալ սկսան. մեծ աւետիս, աւետիս,
(Չմոռցի խայտառակ Աւետիսը չե)
երկու քանտիւաններն են...

ԿԱՎՈՐՇ

ԲԱՆԱԳՈՂ

★

Հիմայ միայն կը մնայ գիտնալ
թէ Ձարը այս երկուքէն ո՞րը պիտի
ընտրէ...

Կը սպասենք...

ՅԱԿՈԲ ՏԵՐ-ՅԱԿՈԲԱՆ
(Մերիմը)

ԱՊՏԱԿՆԵՐ

Ձա՛րկ, բայց մտիկ ըրէ՛:

Թերմիւսնը Հագիգաթ կ'ըսէ թէ
ամէն վտանգներու դէմ միակ դար-
ման մը կայ. ան ալ սա է որ ժողո-
վուրդին սովորեցնել քաղաքական ի-
րաւունքները:

Ո՞վ պիտի սորվեցնէ. արդեօք
այս պաշտօնը Թանիկի՞ պիտի յանձ-
նեն. այն ատեն բաւական խելացի
գործ մը ըրած կ'ըլլան:

★

Օամ. Երեւոյ. Ժողովը պիտի

ընէ եղեր ոստիկանատան պաշտօ-
նատան մէջ զիջուած ժողովներու
անազին կոյտը, որ բռնակալ Բէթի-
մին գաղտնիքները մէջտեղ պիտի
հանէ: Եւ այս օրերու պիտի տեսնենք
թէ... բայց ի՞նչ պօշ լաջեր, բան
մըն ալ տեսնելիք չունինք:

★

Իսլամները ոչ թէ սահմանադրու-
թիւնով, այլ հանրապետութիւնով
ալ մարդ ըլլալիք չունին: Դարձեալ
Իզմիթի մօտերը յոյն մը քիթը կտրե-
րն պարզապէս խաւով կնոջ մը հետ ա-
պօրէն յարաբերութեան մէջ ըլլալուն
համար: Եւ այս տեսակ արարքնե-
րուն վայրենութիւն չեն ըսեր և ի՞նչ
կ'ըսեն ո՞վ Թանիկ և ո՞վ Հիւսէյին
ճահիտ:

★

Ասկէ առաջ երբ Թուրք մը Հայ
մը կը ծեծէր անմիջապէս միւս օրը
կամ պատուանշան կը ստանար և
կամ աստիճանի բարձրացում: Իսկ
այսօր, իբրեւ առաջին բարիք Օս-
մանեան Սահմանադրութեան, երկու
Թուրքեր որոնք կ'երեւի մէկ մէկ
դղուծի գլուխ են եղեր, Հայեր ծե-
ծած ըլլալուն համար, տասնական
օրուան բանտարկութեան դատապար-
տուեր են: Ի՞նչ է ամա՛ս նէ իսէ:

★

Պոլսոյ բռնակալներուն վրայ աս-
կէ վերջը եւս քիչ պիտի փակցուի,
որպէս զի կարելի ըլլայ զանոնք
գտնել, երբ որ պէտք ըլլայ: Որով-
հետեւ ասկէ առաջ բեռը կը շալ-
կէին և կը տանէին ո՞չ թէ քու փա-
փաքած, այլ իրենց ուզած տեղը:

★

Պարոն Տիգրանիկի գլուխն ալ
փոխուած է ժամանակին հետ, և
տեսէ՛ք ինչ կ'ըսէ. «Միշտ եւս օս-
մանեան կառավարութիւնը չյարգէ
օրինականութիւնը և անկեղծօրէն
ցոյց չտայ իր անխախտ վճռակա-
նութիւնը կազմող զանազան տար-
րերուն և ժողովուրդին նկատմամբ
բռնակալութիւն գործ ըրած աղա-
ղակող խտրութիւնը, այդ նոյն ժո-
ղովուրդները արդարութիւնը չգըտ-
նելով իրենց երկրին մէջ, պիտի դի-
մեն օսար միջամտութիւններու»:

Պիտի հարցնէի անշուշտ Պ. Տիգ-
րան Ձաւէնի թէ «Ինչքա՞ն ո՞ր էր 14
օր առաջ»: Բայց ի՞նչ կրնաք ըսել,
Տիգրան Ձաւէն սկզբունքի տէր
մարդ է:

★

Հայաստանի մէջ հարստահարու-
թիւնները կը շարունակուին եղեր:

Ո՞վ ըսաւ, էֆէնտիմ, սո՛ւտ է,
սուտ...

Ո՞վ տեսեր է, ո՞վ ջարդուեր է,
եւ այսպէս կը միտնարուինք,
քանի որ միտնարութիւնը կեանք է:

★

Ամօթ չըլլայ հարցնել Արմենակ
Ինճեան փաստաբանցուն թէ՛ ին-
չո՞ւ ոտքով ձեռքով Մայր եկեղեցիի
գործներուն մէջ ինչկեր է. արդեօք
թաղական ըլլալ կ'ուզէ. բայց պէտք
է լաւ գիտնալ ինչպիսի պարտիկ
որ թաղականն մը նախ խելը յետոյ
փորձառութիւն կ'ուզուի ոսկի սկիւղ
և սանկ քաղաքներով մարդ թա-
ղական չէ լինի. չէ՛, չի լինի:

★

Արամ Թահթաճեան, մեր սիրելի
ճարտարագետ բարեկամը, առաջար-
կեր է որ Ղալաթիոյ աշտարակը բա-
րեկարգէ: Մեր բարեկամը դեռ չգի-
տեր որ Թուրքիոյ մէջ դեռ այնքան
չափ բարեկարգութիւնը բաներ կան
որ, աշտարակը շատ ետքի կը մնայ
անոնց քով:

★

Փառք Աստուծոյ այլ եւս գա-
ւառներու մէջ հարստահարութիւն-
ները և սպաննութիւնները վերջ գը-
տան չնորհիւ... «Թանին»ի հերքում-
ներուն:

★

Յելուզակները միայն լեռներուն
մէջ չեն գտնուիր եղեր, ըստ Դեռնդ
Պահատուրի, այլ նաեւ Եգիպտոսի
մէջ ուր գտնուող Պ. Պ. յելուզակ-
ները կը կոչուին եղեր Երուանդ Օտ-
եան և այլն: Այդ Պ. Պահատուրը
ուրկէ՛ իրաւունք առաւ արդեօք դըր-
չի աշխատաւորները յելուզակ կոչե-
լու այդ իրաւունքը. ուրկէ՛ կուգայ
ինք և ո՞ւր կ'երթայ արդեօք. կ'ու-
զենք գիտնալ:

★

Էյուպի Ս. Եղիա Թաղին ազգա-
յինները բարկացեր են մեզի դէմ, որ
հողէ անօթ չիւնելու լաւ վարպետ են
միայն ըսեր ենք, մոռնալով այն
համաւաւոր արհեստին որ կրնամ
ըսել թէ միայն էյուպցիներուն յա-
տուկ է, այն է... համեցագործու-
թիւնը, այսինքն եղիկ քերգիսի:

Կը յանձնարարենք յարգելի է-
յուպցի մօտիւններուն (ոչ թէ Բե-
րայի) որ խելոյսին իրենց յաճա-
խողներէն չառնեն:

★

Արշակ էֆ. Ունճեան՝ ապահովա-
գրական ընկերութեանց մէկ հատիկ
անօրէն է, որուն հետ մարդ հաճոյ-
քով գործ կը տեսնէ: Ապահովագրու-
թեան գործ ունիք, դիմեցէ՛ք Ար-
շակ էֆ. Ունճեանի: Աստուած մի՛ ա-
րասցէ, արկածի միջոցին թէ՛ դիւրին
փարա կ'առնէք և թէ՛ ձեր առած
փարանիւր հեղալ փարա կ'ըլլայ: Ու-
րեմն, դիմեցէ՛ք Արշակ էֆ. Ուն-
ճեանի: Մօնարգ ընկերութեան, որ
բացի ապահով ու վտանգի ապա-
հովագրողէ մը, պիտի գտնէք նաեւ
խիստ համակրելի անձ մը, որուն ըն-
կերութեան ապահովագրութիւնը հա-
ճոյք մըն է:

★

Ստացանք Խաթաբաշայի վերջին
թիւը, որուն Պոլսոյ ներկայացուցիչն
է Գըլըճեան գրատունը: Ինչ աղ-
ւոր թիւ, ինչ աղւոր պատկերներ,
ինչ աղւոր գրուածքներ: Մարդ Հայ
ըլլալուն համար ի՞նչ կը գտայ կոր՝
այս հանդէսը տեսնելով: Կարդացէ՛ք
Խաթաբաշայ, որ Կալոշի Քիթի
հրատարակած է իր վերջին թիւին մէջ:

★

Կամայ կամաց երթալով կը հա-
մողում կոր որ Երուսաղէմը այլեւս
պիտի բարեկարգուի, որովհետեւ հե-
տը դնեմք սկսած են վաւերել Եղիա
Եղիանեան և Կարապետ Կարապետեան
անունով և վարդապետի նմանող
մարդիկ, որոնք այլեւս չափը անցու-
ցին: Երեւակայեցէ՛ք մեր ուտել չի
կրցած խաթրը ասոնք կուտեն կոր

եղեր, այսինքն հոմանունի ալ կը
պահեն եղեր ի տես յարագային...
ազգը բաղմանելու համար, և այլն:

★

Կէս օր. — Պատրիարքարանի պաշ-
տօնեաները հիմա Պատրիարքարան
եկան. խահուէ խմելուն պէս իրենց
պաշտօնին գլուխը պիտի անցնին:

★

Սուրհանդակ պատուական օրա-
թերթին խմբագրապետը Պ. Տիգրան
Ձաւէն որ խիստ սկզբունքի տէր
մարդ մըն է, Հոկտեմբեր 10ին քա-
ղաքական տեսութիւն մը գրած էր
որուն մէջ պարզած էր իր գաղափա-
րը Յիւդէո-քրիստոնէական մասին, և խըս-
տիւ կը քննադատէր այն ուղղու-
թիւնը որով կարգ մը թերթեր կ'ու-
զէին Հայոց խելիւր մտցնել յառա-
ջիկայ դեպքանախորհուրդին մէջ.
«Մենք որ օսմանցի ենք, կը պոռար
Պ. Ձաւէն, ինչո՞ւ մեր բաղդը կապ-
ուած չենք տեսներ միւս օսմանցի
ազգերուն բաղդին հետ, և կ'ուզենք
զատ յօդուած մը ունենալ մեզի հա-
մար»:

Ժամանակը փոխուեցաւ և եղաւ
Հոկտեմբեր 24:

★

— Տիկին, ո՞ւր կ'երթաք այսպէս արագ:
— Բերա, Գարման վաճառատունը կ'եր-
թամ կոր...

— Ի՞նչ կայ որ հոն:

— Ժամանակ անցնելու չի գար. քանի մը
օրուան համար բացառիկ վաճառում կազմա-
կերպած է: Շատ աժան գինով կը ծախուին
Քրիստոսական ապրանքներ, ինչպէս մանթո,
քոսթիմ, պլուզ, կերպաս, ձեռքի պայուսակ,
գոտի ևն. ևն.:

— Ուրեմն ե՛ս ալ գամ... ճիշդ այս առ-
տու քանի մը ոսկի փողոցի էրկէս, ա՛լ խա-
նութիւն կը պարպենք:

★

Իզմիթի մէջ լրագրավաճառները
փողոցներուն մէջ, Թուրքերուն կող-
մէ կախուած Յոյն պատրիարքի մը
պատկերը կը ծախեն կոր եղեր և
Յոյները կը բարկանան: Արդ՝ տեղն է
հարցնելու Պ. Պ. Թանիկի, Իզմիթի,
Շուրայի Իւնիքի, Թ. Հագիգաթի և
այլոց թէ՛ հիմա ինչո՞ւ ձայն չեն հա-
ներ և միայն այն ատեն ձայն կը հա-
նեն, երբ Հայոց Թագաւորներու պատ-
կերները կը ծախուին: — Եօյլե՛ ես՝,
պիտի պատասխանեն մեր Պ. Պ. Թուրք
անկողնակալ!!! պաշտօնակիցները,
Իսլամները ուրիշ, Դիստոնները
ուրիշ...

★

Աւստրիական ապրանքներուն դէմ
պոյսօք կը շարունակէ: Իզմիթի մէջ
գտնուող Հայ-Հռոմէական Վիէննա-
կան Հայրերուն դէմ ալ պոյսօք սկը-
սած է, և Իզմիթի կաթողիկոսները այլ-
ևս անոնց քով չեն երթար խոստո-
վանելու: Այս գործէն միակ շահող-
ները Վենետիկցիները պիտի ըլլան:

★

Այս օրերս անձրեւ եկաւ Պոլսոյ
մէջ:

ՎԱՂԸ «ԿԱՎՈՐՇ»

ԱՐՏՈՆԱՏԵՐ Ա. ՍԱԳՈՅԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳՈՅԱՆ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵԻՈՐ
Շ Ի Շ Ե Ր
(Verres pharmaceutique)

Ֆեղարաններու և դեղորէից վաճառականներուն համար մասնաւոր շին-
ուած շիշերը մինչև հիմա Հրեայ վաճառական մը մօտօրօջ ըրած էր :
Այժմ ուրախ ենք յայտարարելու որ տիար Մկրտիչ Պօղոսօֆ (Այլըր էֆէնտի
խան, թիւ 27 գրասենեակը) ձեռնարկած է այս գործին և ունի ձոն ու այ-
լազան մթերք մը այդ կարգի ամէն կերպ շիշերու և կարող է մրցիլ ամէն
կերպով : Վստահ և ապահով ենք որ թէ՛ Պոլսոյ և թէ՛ դաւառի մեր բոլոր
Հայ դեղագործները և տոկիսքները պիտի փութան իրենց գնումը ընել այս
Հայ և այս ճիւղին մէջ մէկ հատիկ առեւտրական տունէն, քաջալերելու
համար Հայ ձեռնարկուն որ միեւնոյն ատեն աժանութիւնը բնաբան ընտրած
է իրեն :

ՈՍԿԵՐԶԱՏՈՒՆ
“ՔՐԻՍԹՕՖԼ”

ՄԻ ՄԻԱՅՆ ՄԷԿ ՀԱՏԻԿ ՏԵՍԱԿ
ԱՄԵՆԱԿԱՐԵԻՈՐ
ԶԱՅՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ՊԱՀԱՆՁԵՑԷՔ

Այս
մարման



Եւ «ՔՐԻՍԹՕՖԼ»
անունը

Ամէն մէկ կտրին վրայ

La Grande Fabrique
S. S. S. S. S.
1908Ի ԶՄՐԱՆ ԵՒ ԱՇՆԱՆ
ՆՈՐՈՅԹՆԵՐԸ
Փ Ն Տ Ո Ւ Յ Ե Ք
Շ Թ Ա Յ Ն
ՎԱՃԱՌԱՏԱՆՑ ՄԷՋ
ՂԱՆԱԹԻԱ ԵՒ ՊՈԼԻՍ

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցա-
նէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ
տաղաւակի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ր

Հայրապիէ ԿԱՅՍ. ՊԱՀԱՏԱՆ The Singer Manufacturing Co
մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամէնէն աւելի կատարելա-
գործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բո-
վանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ :

Զեռքի, ոտքի, ու ոտքի եւ ձեռքի միանգամայն

մեքենաներ կը գտնուին :

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեամբ
վաճառատանց մէջ :

- | | |
|---------|---|
| ԲԵՐՍ. | 1. Մեծ փողոց, Պօն Մառչիի դէմ, Թ. 343 և 343 կրկին. |
| | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ. | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | 1. Սուլթան Համամ, Թ. 2 |
| | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 2 |
| ՍԵԻՐԱՍԻ | 2. Գարշէ Պոլս, Թ. 120. |


ՀԱՐԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Դասերը եւ նորագոյնիւնք ձեռք.

Կատարելալ երաւատարարութիւն:

Մասաճիւնդեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ
Փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղզուրի տունը :



VALSE
BRILLANTE

ԳՐԻԳՈՐ ԹՕԼԱՅԵԱՆԷ

Գին 5 դրու

Կեդրոնատեղին է մեր Խմբագրատունը

Կը ծախուի Կ. Պոլսոյ բոլոր երաժշտ.

խանութներուն մէջ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱՄԵՆԱԿԱՐԵԻՈՐ ԼԱՍԹԻԿ

Զմեռը մօտեցաւ, անձրեւները սկսան, հետեւաբար լասթիկները և լա-
ւասթիկները կարեւոր մէկ առարկան սկսան ըլլալ դարձեալ մեզի... մահ-
կանացիներուն համար :

Լաւ լասթիկ ունենալը կը նշանակէ թէ լաւ խելք ունիք և չնորհքով
մարդիկ էք : Արդ դիմեցէք, գացէք առէք Ֆրանսական այն լասթիկները
որոնք շատ քիչ մնացած են և 4 ամիս կառանքիով կը տրուին : Անցեալ
տարի այս ապրանքը կամուրջին գլուխը Շեքսպիրին խանութը փոքրա-
քանակ, իսկ Այլըր էֆ. խան, Նօ. 27 Պօղոսօֆի քով կը ծախուէր մեծա-
քանակ. հիմայ թէ մեծաքանակ և թէ փոքրաքանակ կը ծախուի Պօլսոյ,
Այլըր էֆ. խան, թիւ 27, տիար Մկրտիչ Պօղոսօֆի գրասենեակը :

Ո՛վ Ծաղիկի և Կապուշի ընթերցողներ, վազեցէ՛ք տիար Պօղոսօֆի
քով և անպատճառ գնեցէ՛ք հատ մը :

Բերայի յաճախորդաց դիւրութեան համար, մասնաւոր կանանց, սոյն
ապրանքներուն ամէն տեսակներէն կը գտնուի դերձակ Տիար Երուանդ Մի-
րիճանեանի քով, Կալաթա Սէրայի քովի փողոց թիւ 14 արարթըմանը :



ՎԱՅՆԵԼԶԱՍԷՐ ԿԻՆԵՐԸ
ՈՐՈՒՔ ԿՈՒՁԵՆ ՊԱՀՊԱՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ
ՊԵՏՐ Է ԱՄԷԼ ՕՐ ԴՈՐԾԱԾԵՆ
ՃԵՄԱՐԻՑ
ԳՐԻՄ ՍԻՄՈՆԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵԻՆԱԼ ՏՈՂԵՐԸ

ԿՆՈՋ ՄԸ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ Կատարելալ չըլլալ՝ առանց գոյնի,
մաքրութեան, Բոլոր այն տիկիկները որոնք հոգը ունին այս թան-
կազին ձիւքերը անկորուստ պահելու, պէտք է բացարձակապէս
մերմեն գործածութիւնը այն ամանակին արտադրութիւններուն ու-
րոնք շունդալից ուղղափնորով ծախու կը հանուին Գործածուած
նախնական նիւթերուն ստորին տեսակէ ըլլալն է որ ներելի կ'ընէ
այդքան աման ծախել զանոնք : Այս պատճառաւ նուազ ստորին
տեսակները պատրաստուած են մեղրամոմով կամ օճառով, որոնք
օդին մէջ կ'չորանան, և միւս տեսակները, աւելի վտանգաւոր մոր-
թին համար, կ'պարունակեն այն տեսակ ճարպեր որոնք կ'ծծուին և
քիչ ատենէն առաջ կ'ըրեն անդամանելի կարմրութիւններ և խոր-
շոմներ :

Միայն ԳՐԻՄ ՍԻՄՈՆԸ հնարուած 1860ին, զուտ նշայի կշի-
ւեռօյնով բաղադրուած՝ առանց ո՛ր և է նիւթի, իրապէս առողջա-
պահական արտադրութիւն մըն է. բովանդակ աշխարհի մէջ բոլոր
վայելչասէր կիներէն ընդունուած է և նոյն իսկ իր անունը յաջո-
ղութեան պատճառաւ է որ բաղմաթիւ կեղծ նմանութիւններ երեւ-
ւան կ'ընեն ամէն օր : 1900ի տիկեղերական Արուեստահանդէսին
մէջ արժանացած է Ոսկի Միտալի :

Ի հարկէ ԳՐԻՄ ՍԻՄՈՆԸ գինը աւելի բարձր է կեղծ պատ-
րաստութիւններու գինէն և ասոր պատճառը իսկապէս իր նախնա-
կան նիւթերուն աղնիւ տեսակէ ըլլալն է, որովհետեւ բոլոր ծա-
խողները կ'խոստովանին թէ հակառակ անոր համեմատաբար բարձր
գնոյն՝ նուազ կը չահին նմանօրինակ ուրիշ տեսակներու վրայ :

Բնաւ մի՛ վարանիք ուրեմն պահանջել ճշմարիտ ԳՐԻՄ ՍԻՄՈՆԸ,
միշտ լաւ ուղղութիւն ընելով վերի վաճառանիւն և յաւէտ եւ-
րիտասարդ ու թարմ պիտի մնաք, մինչդեռ ձեր գրողուհիները
պիտի պառաւանս՝ ցաւելով իրենց սխալ խնայասիրութեան վրայ :